

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍԸ ԳԱ ՄԻԿՐՈԲԻՈԼՈԳԻԱԿԱՆ ԺՈՂՈՎԱԽՈՒ
МИКРОБИОЛОГИЧЕСКИЙ СВОРНИК АН АРМЯНСКОЙ ССР

Դրակ VII

1953

Выпуск VII

Ա. Ա. ՄԵԶՐԱՔՅԱՆ

ԹԻԹԵՌՆԱԾԱՂԿՎՈՐ ԲՈՒՅՍՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԱՐԲԵՐ
ՓՈՒԼԵՐՈՒՄ ԱԶՈՏԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅՈՒՆԸ

Թիթեռնածաղկավոր բույսերի զարգացման տարբեր փուլերում ազոտի կուտակման դինամիկան գեռ լրիվ ուսումնասիրված չէ, մինչդեռ այդ հարցի լուծումը կարևոր և էական նշանակություն ունի պալարաբակտերիաների բիոլոգիական հատկանիշները պարզաբնելու տևակետից:

Այդ նկատառումով ահա, մենք ձեռնամուխ եղանք տվյալ հարցի ուսումնասիրությանը:

Կորնգանի վեգետացիալի ընթացքում, ցանքից հետո յուրաքանչյուր 15 օրը մեկ անգամ, դաշտային փորձերից նմուշներ ենք վերցրել նրա տերևներից, արմատներից և պալարիկներից, այդ նմուշները բերել ենք օդաշորային գրության և ստացել միջին նմուշը, որից հետո Կելդալի մեթոդով որոշել ենք ազոտը: Փորձերը դրվել են 17 շտամ պալարաբակտերիաների հետ, երկու կրկնողությամբ: Ազոտի որոշման վերաբերյալ տվյալները բերվում են՝ 1—5 աղյուսակներում:

Աղյուսակ 1

Կորնգանի թփակալման շրջանում ազոտի քանակը %-ներում

Շտամները	Տերևներում	Արժանաներում	Շտամները	Տերևներում	Արժանաներում
Կոնտրոլ	3,98	1,61	10	3,98	1,63.
1	4,48	1,75	11	4,61	1,58
3	4,10	1,54	12	4,69	1,91
4	5,07	1,86	13	4,33	1,54
5	4,31	1,12	14	4,84	1,77
6	4,31	1,72	15	4,76	1,76
7	4,45	1,63	16	4,98	1,82
8	4,39	1,86	17	4,68	1,61
9	4,34	1,89	18	4,48	1,75

Աղյուսակ 1-ում ամփոփված թվական տվյալները ցույց են տալիս, որ պալարաբակտերիաների գրեթե բոլոր շտամներով վարակված քույսերը, բացառությամբ № 10 շտամի, ավելի հարուստ են ազոտով, քան պալարաբակտերիաներով շվարակված բույսերը: № № 4, 14, 15 և 16 ակտիվ շտամներով վարակված բույսերի տերևներում ազոտն անհամեմատ ավելի շատ է. ինչ վերաբերում է արմատներին, ապա այստեղ ակտիվ շտամով վարակվածների մոտ ազոտը երեխմ բարձր տոկոս է կազմում, իսկ երբեմն էլ ցածր, այնպես որ արմատների նկատմամբ այդ օրինաշափությունն ամեն դեպքում չի նկատվում:

Հատկանշական է նաև այն, որ սկզբնական շրջանում, երբ բույսերը դեռևս շատ փոքր են և գտնվում են թփակալման ստադիայում, ընդհանուր առմամբ այդպիսի փոքր բույսերի մոտ, ազոտը թե՛ տերևներում և թե՛՝ արմատներում այնքան էլ. շատ չէ, թեև վարակված բույսերի մոտ ազոտը, համեմատած շվարակված բույսերի հետ, ավելի շատ է:

Հետագայում, երբ բույսերը հասնելով ցողունակալման ստադիային, մոտենում են արդեն կոկոնակալման, ինչպես ցույց են տալիս աղյուսակ 2-ում բերված տվյալները, ազոտը բույսի տերևների մեջ ավելի է շատանում:

Աղյուսակ 2
Կորնդանի կոկոնակալման նախօրյակին ազոտի քանակը 0/օներով

Շտամները	Տերևներում	Արմատներում	Շտամները	Տերևներում	Արմատներում
Կոնտրոլ	5,18	2,80	10	5,22	3,27
1	5,79	2,38	11	5,81	2,38
3	5,32	3,03	12	5,02	2,58
4	6,58	3,08	13	5,46	2,55
5	5,40	3,08	14	6,16	3,27
6	5,39	2,80	15	6,10	3,27
7	5,60	2,64	16	6,37	3,22
8	5,60	3,36	17	5,95	2,80
9	5,53	2,52	18	5,74	3,15

Այսպես, օրինակ՝ եթե № 14 շտամով վարակված բույսի տերևները թփակալման ստադիայում պարունակում են 4,84 տոկոս ազոտ, ապա կոկոնակալման անցնելու նախօրյակին այդ նույն շտամով վարակված բույսի տերևներում ազոտն արդեն կազմում է 6,16 տոկոս, իսկ № 15 շտամով վարակված բույսի տերևները

ևթե թփակալման ստադիայում՝ պարունակում են 4,76 տոկոս ազոտ, ապա կոկոնակալման անցնելու նախօրյակին ազոտի քանակը կազմում է 6,10 տոկոս: Նման օրինաշափությունն նկատվում է նաև մնացած 16 շտամներով՝ վարակված բուլսերի մոտ, սակայն բուլսերի լրիվ ծաղկման շրջանում ազոտի քանակը փոքր ինչ պահառամ է (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3
Կորնգանի ծաղկման շրջանում ազոտի քանակը %-ներով

Շտամները	Տերեններում	Արժատներում	Շտամները	Տերեններում	Արժատներում
Կոնտրոլ	4,0	1,54	10	4,06	1,68
1	4,54	2,02	11	4,56	1,32
3	4,06	1,68	12	4,62	1,85
4	5,77	1,62	13	4,23	1,76
5	4,14	1,96	14	4,70	1,64
6	4,12	1,47	15	4,70	1,76
7	4,48	1,71	16	5,40	1,54
8	4,39	1,54	17	4,59	1,85
9	4,37	1,62	18	4,54	1,68

Այսպես, օրինակ, եթե № 4 շտամով վարակված բուլսի տերեններում կոկոնակալման անցնելու նախօրյակին ազոտի քանակը կազմում էր 6,58 տոկոս, ծաղկման շրջանում այն կազմում է 5,77 տոկոս, իսկ № 14 շտամով վարակված բուլսի տերեններում եթե նրա կոկոնակալման նախօրյակին ազոտի քանակը կազմում էր 6,16 տոկոս, ապա ծաղկման շրջանում այն կազմում է 4,70 տոկոս: Նման օրինաշափությունն նկատվում է նաև մնացած բոլոր շտամներով վարակված բուլսերի մոտ:

Կորնգանի պտղակալման ստադիայում ազոտի քանակը, հատկապես բուլսի տերեններում, զգալիորեն պակասում է (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4-ում ամփոփված թվական տվյալները ցուց են տալիս, որ կորնգանի պտղակալման ստադիայում ազոտի քանակը, համեմատած ծաղկման շրջանի հետ, այնքան էլ մեծ չէ: Օրինակ՝ № 4 շտամով վարակված բուլսի տերենների մեջ ազոտի քանակը ծաղկման ստադիայում կազմում էր 5,77 տոկոս, ապա պղտղակալման շրջանում այն իշնում է 4,84 տոկոսի, № 15 շտամով վարակված բուլսի ազոտը 4,70 տոկոսից իշնում է մինչև 4,65 տոկոսի, № 16 շտամով վարակված բուլսի մոտ ազոտը 5,40 տո-

Աղյուսակ 4

Կորնգանի պտղակալման շրջանում ազոտի քանակը %/օներով

Շտամփերը	Տերեներում	Արմատներում	Շտամփերը	Տերեներում	Արմատներում
Կոնտրոլ	3,50	2,15	10	3,12	2,38
1	4,39	2,55	11	4,48	2,04
3	3,95	2,52	12	4,62	2,38
4	4,84	2,24	13	4,06	2,18
5	4,06	2,04	14	4,76	2,46
6	4,00	2,13	15	4,65	2,18
7	4,12	2,18	16	4,76	2,24
8	4,10	2,29	17	4,56	2,21
9	4,09	1,99	18	4,34	2,44

Կոսից իշնում է 4,76 տոկոսի: Սակայն, եթե այդ տվյալները համեմատելու լինենք բույսի զարգացման այն ստադիայի հետ, երբ ազոտը բույսի տերևներում հասնում է ամենաբարձր տոկոսի, այսինքն ցողունակալման այն ստադիայի հետ, երբ բույսն արդեն անցնում է կոկոնակալման, կտեսնենք, որ ազոտի անկումը պրտղակալման ստադիայում բավական զգալի է. այսպես, օրինակ՝ հենց նույն վերը հիշված շտամփերից № 4 շտամով վարակված բույսի տերևներում, եթե կոկոնակալման նախօրյակին ազոտի քանակը կազմում է 6,58 տոկոս, ապա պտղակալման շրջանում այն իշնում է 4,84 տոկոսի, № 15 շտամով վարակվածի մոտ ազոտի քանակը 6,37 տոկոսից իշնում է 4,76 տոկոսի:

Յ. Յու. Գելցերը (1948) հետաքրքիր տվյալներ է բերում Յ. Յովիմչովի շտպագրված դիսերտացիոն աշխատանքից, որտեղ ասվում է, թե լուսպինի վրայից բուտոնները հեռացնելու դեպքում օրգանական նյութերի, ինչպես նաև ընդհանուր և սպիտակուցային ազոտի քանակը մինչև բույսի վեգետացիայի վերջը չի նվազում, մինչդեռ նորմալ զարգացող բույսի մոտ, որտեղ բուտոնները հեռացված չեն, նրա գրեթե բոլոր մասերում, բացի ուղղութուկտիվ օրգաններից, նկատվում է չոր նյութերի և ազոտի խիստ անկում: Նույնը դիտվում է նաև մեր փորձերում:

Կորնգանի մոտ, նրա կոկոնակալումից հետո մինչև պտղակալման շրջանը, բույսի թե՛ տերևներում, թե՛ արմատներում և թե՛ պարարիկներում, ինչպես այդ կտեսնենք հետագայում, նկատվում է ազոտի քանակի նվազում:

Բույսերի ծաղկման և պտղակալման շրջանում պալարիկների մեջ ազդութի քանակին վերաբերող տվյալները բերված են աղյուսակ 5-ում:


Աղյուսակ 5

Կորնգանի ծաղկման և պտղակալման շրջանում պալարիկների մեջ ազդութի քանակը 0/օ-ներով

Շտամերը	Մաղկման շրջանում	Պտղակալման շրջանում
Կոնարու	6,86	5,81
1	8,96	7,56
3	7,42	6,30
4	9,80	9,10
5	7,70	6,58
6	7,56	6,51
7	8,54	7,42
8	8,40	7,35
9	8,12	7,14
10	7,0	5,81
11	9,10	7,77
12	9,38	7,93
13	7,98	6,86
14	9,42	8,40
15	9,38	7,98
16	9,52	8,68
17	9,24	7,84
18	8,82	7,49

Ինչպես ցույց են տալիս աղյուսակ 5-ում բերված տվյալները, պալարիկներն անհամեմատ ավելի հարուստ են ազդութիւն, իսկ եթե շտամերը համեմատելու լինենք մեկը մյուսի հետ, կտեսնենք, որ մեծ մասամբ ակտիվ շտամերով վարակված բույսի պալարիկներում ազդունակ բարձր տոկոս է կազմում:

Այնուհետև, համեմատելով ծաղկման և պտղակալման շրջանին վերաբերող թվական տվյալները (աղյուսակ 5), նկատում ենք վերը նկարագրված օրինաշափությունը. այսպիս, օրինակ՝ № 4 շտամով վարակված և ծաղկման շրջանում գտնվող բույսի պալարիկներում ազդութի քանակը կազմում է 9,8 տոկոս, պտղակալման շրջանում այդ նույն շտամով վարակված բույսի պալարիկներում ազդութի քանակն իշխում է, հասնելով 9,1 տոկոսի: Եթե № 14 շտամով վարակված բույսի պալարիկներում, ծաղկման շրջանում, ազդութի կազմում է 9,42 տոկոս, ապա պտղակալման շրջանում այն իշխում է 8,4 տոկոսի, եթե № 15 շտամով վարակված բույսի պա-



լարիկներում, ժաղկման շրջանում, ազոտը կազմում է 9,38 տոկոս, ապա պտղակալման շրջանում այն կազմում է 7,98 տոկոս:

Նման օրինաշափություն նկատվում է նաև մյուս շտամներով վարակված բույսերի պալարիկներում:

Վերոհիշյալ մեջբերումներն ի մի ամփոփելով, կարելի է անել հետեւյալ հիմնական եղրակացությունը:

Եթե կորնգանի բույսերը գտնվում են թփակալման ստադիա-լում, նրա տարրեր մասերում ազոտը փոքր տոկոս է կազմում, հետագայում, եթե աճման ընթացքում նրանք հասնում են ցողու-նակալման և գտնվում են արդեն կոկոնակալման անցնելու նախօր-յակին, ազոտի քանակը հասնում է մաքսիմումի, իսկ ծաղկման և պտղակալման շրջանում (եթե բույսն անցնում է ռեպրոդուկացիոն գաղանների կազմակերպման) տերևների, արձատների և պալարիկների մեջ ազոտի քանակը նվազում է:

Գրականություն

Гельцер Ф. Ю. 1948. Новый способ получения активных клубеньковых бактерий (бактериальные питомники). Пути повышения активности клубеньковых бактерий. Огиз—Сельхозгиз.

Ա. Ա. Մեգրաբյան

Интенсивность накопления азота в разных фазах развития бобового растения

Резюме

Несмотря на давность применения нитрагина, динамика накопления азота в бобовых растениях недостаточно изучена и освещена в литературе. Имеются лишь отдельные работы, касающиеся определения количества общего азота в разных частях растений.

Целью настоящего исследования было выявление динамики накопления азота в эспарцете в период его развития.

Для разрешения данного вопроса в различных стадиях развития эспарцета (кущение, перед бутонизацией, цветение,

плодоношение) в условиях полевого опыта, нами периодически, через каждые 15 дней, брались образцы листьев, корней и клубней для определения в них содержания азота (по Кельдалю). В результате проделанных анализов выяснилось, что наименьшее количество азота в растении содержится в стадии кущения, а в период начала бутонизации оно достигает своего максимума. Затем, в стадии цветения и плодоношения, когда растение переходит к образованию репродуктивных органов, содержание азота в листьях и клубеньках значительно снижается, расходуясь, повидимому, на образование этих органов.